ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2010 թվականի ինը ամսում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2010 թվականի ինը ամսում քաղաքացիներից ստացվել է 1111 նամակ, որից 1096-ը՝ դիմում, 10-ը՝ բողոք, 6-ը՝ առաջարկություն:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 63 դիմումներից 51-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 28 դիմումներից 23-ին տրվել է դրական լուծում կամ, գործող կարգի համաձայն, ներկայացվել է ՀՀ կառավարություն: Աշխատանքի տեղավորման և հաշվառման մասին 60 դիմումներից դրական լուծում է ստացել 17-ը, 23 դիմումների վերաբերյալ մարզպետի կողմից միջնորդություններ են ներկայացվել համապատասխան կազմակերպություններ՝ աշխատանքի տեղավորման հարցում օժանդակելու խնդրանքով, մյուսները՝ հաշվառվել են:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 63 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 484 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 400 քաղաքացիներ: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 101 քաղաքացիներից բավարարվել է 98-ի խնդրանքը, 25 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 89 հոգու տրվել է առողջարանային բուժման ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2010թ. ինը ամսում կատարվել է 180 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են քաղաքացիների արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2010թ. ինը ամսվա/

	1-ին կիս.	3-րդ եռ.	9 ամիս
1. Ստացվել են նամակներ ընդամենը -	747	364	1111
որից՝			
առաջարկություն	5	1	6
դիմում	735	361	1096
բողոք	8	2	10
այդ թվում՝			
կրկնակի	5	2	7
կոլեկտիվ	4	1	5
2. Ըստ հարցի բնույթի՝			
բնակարանային	16	4	20
կոմունալ-կենցաղային	11	14	25
շինարարական	19	7	26
արդձեռ/տրանսկապ/	-		
գյուղատնտեսական	5	2	7
բնութ. պահպանութ.	5	1	6
առևտրի	2	1	3
կենսաթոշակի և նպաստի	7	4	11
առողջապահության	197	78	275
կրթական և մանկ.հիմն	39	45	84
գիտութ.կուլտուրա	1	1	2
ֆինանսական	336	148	484
օրենսդրական	4	2	6
քաղ. և որդեգրման	13	2	15
աշխ.տեղ և հաշվառման	33	27	60
հողհատկացում և հողօգտ.	24	4	28
ապարատային	13	5	18
այլ հարցեր	33	9	42